ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վ. ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Արտաշատ

11.04.2014թ

N8

# 2014թ ՄԱՐՏԻ 29-31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՑՐՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ և ՓՈԹՈՐԻԿԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի երկրորդ պարբերության և 32-րդ հաղվածի 20-րդ կետի պահանջներով .

Ավագանին

Որոշեց-1 Հաստատել 2014թ. 29-31-ն ընկած ժամանակահատվածում համայնքի գյուղացիական տնտեսություններին ցրտահարության և փոթորիկի հասցված վնասի չափի և ակնկալվող աջակցության վերաբերյալ տեղեկատվություններում նշված գյուղացիական տնտեսությունների ցանկը / կից ներկայացվում/ է :

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանը, սահմանված կարգի համաձայն, զիջելու նշված գյուղացիական տնտեսությունների հողի հարկի 100% և ոռոգման ջրի վարձավճարների 50%-ի չափով:

Որոշումն ընդունվեց միաձայն

Ավագանի

Գեղամ Սարգսյան կողմ

Հակոբ Սահակյան կողմ

Արարատ Միքայելյան կողմ

Կարեն Ավետիսյան կողմ

Քաջիկ Վարդանյան կողմ

Թորոս Սարգսյան կողմ

Գրիգոր Եսայան կողմ

Դեմ, ձեռնպահ չկա

Վերին Արտաշատի համայնքապետ Ա. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վ. ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Արտաշատ

N9 11.04.2014թ

## ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013թ.ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ ավագանին

Որոշեց -1. Վ. Արտաշատ համայնքի ավագանու 2013թ.դեկտեմբերի 17-ի «Վ.Արտաշատի գյուղապետի աշխատավարձը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 23-Ն որոշման մեջ «Հայեցողական պաշտոն» բաժինը լրացնել նոր տողով՝ հետևյալ խմբագրությամբ «համայնքի ղեկավարի խորհրդական 1, 120000 դրամ աշխատավարձով» :

1. Որոշումը կիրառել 2014թ. Ապրիլի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Որոշումն ընդունվեց միաձայն
Ավագանի

Գեղամ Սարգսյան
Հակոբ Սահակյան
Արարատ Միքայելյան
Կարեն Ավետիսյան
Քաջիկ Վարդանյան
Թորոս Սարգսյան
Գրիգոր Եսայան

Դեմ, ձեռնպահ չկա

Վերին Արտաշատի համայնքապետ Ա. Ղազարյան

Հավելված 1
Վերին Արտաշատ գյուղական համայնքի ավագանու
17.12.2013Թ որոշման

Վերին Արտաշատի ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը` 17
2. Աշխատանազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 190000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 120000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 120000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | | |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 118000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ /3.1-2/ | 2 | 105000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 87000 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-2/ | 1 | 77000 |

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | |
|---|---|---|
| Օպերատոր | 1 | 65500 |
| վարորդ | 1 | 65500 |
| Ցրիչ | 1 | 60500 |
| Էլեկտրիկ | 1 | 60500 |
| Պահակ (վարչական շենքի և մշակույթի տան) | 2 | 60500 |
| Հավաքարար (վարչ.շենքի և մշակույթի տան) | 2 | 60500 |
| հարկահավաք | 1 | |
| Ընդամենը` | 17 | |

Վ.Արտաշատի համայնքի ղեկավար Ա. Ղազարյան